

Կազմված է 30.03.2018թ. և բաղկացած է 3 թերթից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

Օրինակ.....

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1Ժ -18

<<Երևանի ոսկերչական գործարան>> Բաց Բաժնետիրական
Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի,
կայացած 2018թ. մարտի 30-ին, ժամը 14-00

30.03.2018թ.

Ք. Երեվան

Բաց քվեարկությամբ ժողովի նախագահ ընտրվեց Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Վոլոդյա Գասպարյանը, քարտուղար ընտրվեց Օ. Ամիրյանը (միաձայն):

Միաձայն բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողովը, բաղկացած երեք հոգուց Արշալույս Ներսիսյան, Գայանե Ղազարյան, Արմինե Ժամհարյան:

Հաշվիչ հանձնաժողովը զեկուցեց, որ Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցում են.

Ընկերության տեղաբաշխված 10.348.896 բաժնետոմսերի սեփականատերերից 7 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ, որոնք հանդիսանում են 8.289.401 բաժնետոմսերի սեփականատերեր (80,01%), այդ թվում Ընկերության 8 279 117 բաժնեմասի սեփականատեր ՀՀ Պետական գույքի կառավարման վարչություն (80.0%) լիազոր ներկայացուցիչ Վ. Գասպարյան:

Քվորումը ապահովված է և ժողովը անցավ օրակարգի հաստատմանը:
Ժողովին ներկայացվեց հետևյալ օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

Ընկերության 2017թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված աուդիտորական կազմակերպության հաստատում:

Բաց քվեարկությամբ ժողովին ներկայացված օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգի հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ խորհրդի անդամ Վ.Ենգիդունյանը: Նա նշեց, որ Ընկերության 2017թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի անցկացման կապակցությամբ հայտարարված մրցույթի արդյունքով ստացվել է մեկ հայտ՝ «Պրոգրես աուդիտ» ՓԲԸ-ի կողմից:

Նա նշեց, որ Ընկերության տնօրենների խորհրդի առաջարկով մասնակցի հաստատումը պետք է կատարել հաշվի առնելով նախորդ տարվա այդ ծառայության համար նախատեսված 2 100 000 (երկու միլիոն հարյուր հազար՝ ներառյալ ԱԱՀ-ն) դրամ գումարի սահմաններում: Հաշվի առնելով «Պրոգրես աուդիտ» ՓԲԸ-ի գնային առաջարկը՝ 2 100 000 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, և այդ բնագավառում մասնագիտական փորձառությունը, առաջարկվեց որպես Ընկերության 2017թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող մասնագիտացված կազմակերպություն, հաստատել «Պրոգրես աուդիտ» ՓԲԸ-ն: Ժողովի անդամները, իրենց կողմից հայտի ուսումնասիրման արդյունքով, հաստատում են «Պրոգրես աուդիտ» ՓԲԸ-ն, հաշվի առնելով գնային առաջարկը, ինչպես նաև արդյունաբերական ձեռնարկությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի անցկացման փորձը և նրա աշխատակիցների մասնագիտական որակավորումը, և գտնում են, որ «Պրոգրես աուդիտ» ՓԲԸ ունակ է պատշաճ մակարդակով իրականացնել Ընկերության 2017թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:

Հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

Կողմ՝ 8.289.401 դեմ՝ 0 ձեռնպահ՝ 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել <<Պրոգրես աուդիտ>> ՓԲԸ-ն որպես <<Երևանի ոսկերչական գործարան>> Բաց Բաժնետիրական Ընկերության 2017թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող մասնագիտացված կազմակերպություն:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Վ. Գասպարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Օ. Ամիրյան